


ԱՌԿԱ





1. ՄԵՎ ՍԱՐԻ ԶԵՅՉԸՐԱՆ

Մեկ թակավորըմ կեր, էնոր մեկ տղղա կեր: Տղղեն եղավ տասնուիսինգ տարեկան, գյոնաց սար ավշութեն, ջեյհըրամ հառն ծրվեն փախավ, լարեց ջեյհըրանի հետև: Մեկ քիչ սարի մեջ օր գյոնաց, իրեց մարդ էնոր ռաստ էկան:

Ասին. – Տղղա՛, էտա ի՞նչ ա կէնիս:

Ասաց. – Ջեյհըրանի հետև կը լարեմ, գի կը տեսիք:

Ասին. – Տղղա՛, էտի ջեյհըրան չեր, էտի մեկ թակավորի ախչիկ մ' ա, օր սեյրի կենա, էկ, ջեյհըրանի պես ինգե լեռներ, կան կը գա: Թե չես ավատար, էնու պատկերք գի մեր մոտ:

Պատկերք տղղին շանց տղվին:

Պատկերք տանցավ նայեց, խելքից էլավ:

Տղղեն էկավ տուն: Քանի մ'օր մընաց, տղղեն խիվընցավ: ճամխեցին, հեքըըներ պերին, թե տղղի խիվընտութեն ի՞նչ ա:

Դեքըըներ ասին. – Սիրու առե տղղեն: Էնոր տեղ-տարման չոկա, չուր օր ախչիկ չոպերեն:

Թակավոր ասաց. – Էտի չեղի: Էտա ախչիկ ո՞չ ոոց հայվընի միս կուտա, ո՞չ մարթի էրես կը նայա, ո՞չ էլ մարթի կերթա: Պատճառ չեն զյիտե:

Վոզիրն ասաց. – Թակավո՛ր, էտի ճարըմ չըկընողընի, տղղեն կը մեռի:

– ճար ի՞նչ կընողինք, վոզի՛ր:

Վոզիր ասաց. – Թակավո՛ր, տու ծի տաս խազար ոսկի փարա, ես առեմ տղղեն, էրթամ, բալկո ճարըմ կընողիմ:

Թակավոր ասաց. – Տաս խազար չե, կուզես տասմուխինգ խազար տամ:

Վոզիրն առավ տաս խազար ոսկի ու տղղեն իր խետ գյընաց: Ել շատ քիչ էր, թալհուց վերօն խասավ են ախչըկա խոր քաղաք:

Քաղաքին անծանոք էր, գյընաց մեկ պառվում տում: Պառավն էլ մեկ պըստիկ հօդս մ'ուներ:

Ասաց. – Պառավ, մե տեղը չը՞ս ենք, հետօր գյիշեր պառկենք:

Պառավ ասաց. – Քյե մեռնեմ, գի եսա պըստիկ օթախն ա, կուզես՝ էկեք, մընացեք իմ մոտ:

Գյիշեր պառվու տուն մընացին: Յիրիկուն խաց կերելու ժամանակ վոզիր խաղցընեց պառվուց:

Ասաց. – Պառավ, ես լրսեր եմ, օր ծեր թակավորի ախչիկ ո՛չ ողոք հայվընի միս կուտա, ո՛չ իրկան կերա, ենու պատճառն ի՞նչ ա:

Պառավ ասաց. – Դա՛շ կաց, վիր պերնեն լրսեն, լեզիւն կըտրեն, որ օր ակընջով լրսավ, ենու ականջ կը կըտրեն:

Վոզիրն ասաց պառվուն. – Պառավ, ենու մաղեն խասկըցի, ծի պատմա՛, քյե էրկու խազար ոսկի փառա տը տամ:

Պառավ օր փառի ամուն լրսավ, ուրախցավ, ասաց. – Տ'երթամ, խասկընամ էնու մաղեն, ես ենու գյըլխու վըլացողն եմ:

Պառավ առավոտուն էլավ, գյընաց թակավորի ախչըկե սենյակ:

Թակավորի ախչիկ ասաց. – Պառավ, էկա՞ր: Առավոտուն իմ գյուլիս տը վըլան:

Պառավ ասաց. – Ես եսա եղավ տաս տարի ա՛ քիւ գյըլիխ կը վըլամ, քյե ամագ կը տամ, տիւ ծի չասիր, թե տիւ ի՞նչ հապիկ ողոք հայվընի միս ս' ուտի ու իրկան չըս էրա:

Ախչիկ հըռըկավ: ճամխեց, էրկու զարքիա եաի: Մեկ-մեկ կոճան ծեռքեր, պառվու ճըկքեր պըոնեցին, զարկին:

Պառավ լեզվից ինգանվ, տըվին մեկ մարթում քամակ, շըլկեց, տարավ էնոր տուն:

Մընաց չուր մեկել օր, թակավորի կնիկ գյընաց ուր ախչըկան մոտ, ասաց. – Տիւ են պառավ ընչի՞ տըփել տըվիր, մըկա կը մեռի, տիւ ընչի՞ մըտար էնոր մեղաց տակ:

Ախչիկ ասաց. – Տ'երամ պառվու մոտ, էնորից խալալութեն
ուզեմ:

Ախչիկ էլավ, գյընաց պառվու տում:

Ասաց. – Պառա՛վ, պառա՛վ:

Պառավ հჩւշիկ ժենովը ասաց. – Ի՞նչ ա:

Ասաց. – Պառա՛վ, քիւ երվածք, օր ծի երեր ես, ծի խալալ
երա:

Պառավ ասաց. – Չուր տիւ քիւ մաղեն ծի կըսա չենես, քյե
խալալ չըմ էնե, ես գի կը մեռնեմ, էլ հիւրիւշի էլ չըմ կանա ասել:

Ախչիկն էլ ասաց. – Գի կը մեռի, ես իմ մաղեն էնոր տ'ասեմ:

Ախչիկ ասաց. – Պառա՛վ, իմ մաղեն եսին ա. երազի մեջ ես
տեսա՝ ես ջեյիցրան էր, ոոց ջեյիցրան մ'էլ իմ կըշտի խետ կեր: Մենք եսա մեր քաղաքի տիմացի Սև սար խօնդրաց կարծենք: Մեկ տեղ ճհւր կը խըմենք, մեկ տեղ կը նըստենք: Ես ու ետա ոոց
ջեյիցրան էնքան զիրար կուզինք, օր մեր կըշտըներ կը պընդենք հիրար, օր իմ ծախս կող, էնու աչ կող պիւրը չըկեր, լոպկըվեր էր: Էն սարի մեջ արաբներու կոներ էն տեղն են: Մաղմար սալեռով հախափիր մ'էլ զի դան: Մենք ծան կավու պըռուկ կարծենք, էնդից էժանք, էկանք հախազըրի վերեն ճհւր խըմելու: Զասե՞ն արաբներ թոռեր թալած վեր հախազըրին, օր մեզ պըռնեն: Դառժին՝ ոոց ջեյիցրան գյընաց ճհւր խըմելու, ընգավ թոռը վեր, ես կոտշովը էնի ուր թոռից խանի: Դիր էնի ազատվավ, ես ընգա թոռը վե: Արաբներ էկան, օր մե պըռնեն, էնի ծի եռող թոռերու մեջ, փախսավ: Արաբ էկավ, նաջախըմ էգար իմ ճակատ: Ես քյընուց հիշարցա: Դըլ հըլա իմ գյըլիխ կը ցավի էն նաջիսի դըրիից: Ու-
ցեղենի միս օր չըմ ուտի ու հիրկան չըմ երթա, էն պատճառն էն ա, օր ոոցեղեն բերախստ ա, ծի թողեց արաբներու ծեռ ու փախսավ:

Պառավ ասաց. – Քյե խալալ էնի իմ ամագ, օր ես քյե էն-
քան վոլացեր եմ, ծամերու հիստըկեր եմ, թող Աստըված քյե խա-
լալ էնա եսա հիտին տըփոցն է:

Ախչիկ գյընաց ուր խոր սարեն:

Թակավորի վոզիր էկավ, պառավ տեսավ:

Ասաց. – Պառա՛վ, թակավորի ախչըկե մաղեն հիմացա՞ր:

Պառավ ասաց. – Վոզիր, թակավորու ախչըկե մաղեն հիմա-
ցա, չուր հիմաց, մեռնելուց մեկ մազ պըռօծա:

Վոզիրն ասաց. – Պառավ, դե ծի պատմա, օր ես հիմնամ, մեկ ճարըմ կը նոյիմ:

Պառավ ասաց. – Իմ էրկու խազար ոսկին տուր, օր քյե պատմեմ:

Վոզիրն էավ. խուրջին եպիր, պերան եպաց, էրկու խազար ոսկին ետուր պառվուն:

Պառավ ըսկսեց պատմել:

Ասաց. – Ախչիկ կասա, թե՝ էրազի մեջ ես տեսա՞ ես ջեյիցրան էր, ոոց ջեյիցրան մ' էլ իմ կըշտի խետ կեր: Մենք ես մեր քաղցրի տիմացի Սև սար խընդրաց կարծենք: Մեկ տեղ ճկւր կը խըմենք, մեկ տեղ կը նըստենք: Ես ու ետա ոոց ջեյիցրան ենքան զիրար կուզենք, օր մեր կըշտըներ կը արնենք հիրար, օր իմ ծախս կող, ենու աչ կող պիւր չըկեր, լոպկըվեր էր: Են սարի մեջ արարներու կոներ կեն: Մարմար սալերով հախափւր մ'էլ գչ դան: Մեկ օր եճանք հախափրի վըուեն ճկւր խըմելու, ոոց ջեյիցրան ընգավ թոռը վեր, ես կոտշովս ենի ուր թոռից խանի: Դիր ենի ազատվավ, ես ընգա թոռը վեր: Արաք մ'էկավ, նաջախ եզար իմ ճակատ, ես քյընուց հիշարցաւ: Դըլ հըլա իմ գյըլիխ կը ցավի են ողորից: Ոոցեղենի միս օր չըմ ուտի ու հիրկան չըմ երթա, են պատճառ են ա, օր ոոցեղեն բերախստ ա, ծի թողեց արարներու ծեռ ու փախավ: Վոզիր, հիմացա՞ր ախչըկա պատմութեն:

Վոզիր ասաց. – Ի՞նչ ենք, օր ախչըկեն համոզեն:

Վոզիրն առավ տրդեն, գյընաց քաղցրի մեջ, չալուզին տեսավ, ասաց ենոր. – Քյե ի՞նչ տամ, օր տիւ մեկ ամսըվան մեջ իմ տրդին լավ չալուզութեն շանց տաս ու խաղ սովորցուցես:

Չալուզին ասաց. – Տաս ծի հիսուն ոսկի, մեկ ամսի քիւ տրդին լավ չալուզութեն ու խաղալ կը սովորցուցես:

Տըղեն էտու, չալուզին տարավ, օր սովորցուցա:

Վոզիր դիր գյընաց ոսկըրըու մոտ:

Ասաց. – Ոսկըրիչ, քյե քանի՞ ոսկի տամ, օր տիւ Սև սարի քասպիր ոսկով, արծորով շինես:

Ասաց. – Էրկու խազար ջրիկվ կը շինա:

Վոզիր առավ ոսկըրչին, գյընաց Սև սար: Ետա հախափւր, ետա ծան կավիթ, ետա տեղ, օր ընոնք արծոցած են, արարներու կոներ հըմեն պըշքան, էկան:

Ոսկըրիչ նըստավ, արծըրից, ուսկուց էտա սար շինեց: Դախ-
պիւր շինեց ոսկեղեն, ծաղկըներ պատրաստեց: Արաքներու կո-
ներ շինեց, բռներ հախազրի՝ կող պիլիր շինեց: Չուշտ մ'ել ջեյի-
րան շինեց՝ մեկ ոոց, մեկ եք, կափաղ սանդիւխի մեջ եղիր. կա-
փաղով ժածկեց և էտու վողիրին, էնու էրկու խազար ոսկին առեց:

Չում պատրաստեց, մեկ ամիս թընըմավ, տըղեն էլ էկավ:

Տըղեն էնակս չալըջութեն սովոր ա, օր խազար-խազար
եղանակ էնոր չալըջուց կէլնի տիւս:

Առավոտուն առավ տըղին ու գյընաց քաղթի մեց: Շուկի մեց
նըստավ, ըսկսեց չալըջին չալել:

Դըմեն մարք էկան, թամաշա երին:

Ախըզկե խեր թակավոր ու իր վողիր էկած են, գանցած պաղ-
նիս: Պաղնըսից օր տիւս կը գան, թակավոր հանեն կը քյելա, վո-
գիր՝ ես: Վողիր կը տեսմի, օր շուկի մեջ մարթեր թափած են, ծեն
կը գա:

Կր տառնա կը պըշքի, օր մեկ տըղե՞մ նըստի, խազար-խա-
զար եղանակ չալոի կը չալա, խաղ կասա ու կը խաղա:

Վողիր խելքյից կէլնի, թակավոր կը մոռնա:

Թակավոր կերրա ուր սարեն, կիշկա, օր վողիր չըկա:

Կասա. – Վողի՛ր, չէ՞ հիմա տիւս տը գան, քիւ վիզ տը տամ
կըտրել:

Եփ օր տըղեն վերծ կը տա, վողիր կը հիշարնա վըր ուր:

Կասա. – Վո՞յ, ես ի՞նչ եմ երե, թակավոր իմ վիզ կը կըտրա:

Վողիր գյընաց խընն սարեն: Թակավոր երկու ջալադ
պերեր, պատրաստեր, օր էնոր վիզ զանեն:

Վողիր ասաց. – Կը խընթրեն թակավորից, թոխ հըրաման
տա՝ մեկ խոսք ասեն, թոխ նոր իմ վիզ զանա:

Թակավոր ասաց. – Ասա՛, իսի ի՞նչ ա:

Ասաց. – Թակավոր ապրած, էն ժամանակ օր ես ու տիւ
պաղնիսից էկանք, մեկ խորոտ տըղե՞մ շուկի մեջ չալոի կը
գաներ, կասեր ու կը խաղեր: Եփ օր ես տեսա, խելքյից, մըտքից
էլա, քյե մոռցա:

Թակավոր ասաց. – Վողի՛ր, ճամիսեն, էն տըղեն պիրեն, օր
էնպես չեղավ, քիւ վիզ նորեն կը զանեմ:

Թակավոր ճամիսեց տըղեն ու տըղի խետու մարթն առավ
էկավ:

Տըղի խետու մարթն վոզիրն էր, արե՛մ թալս վըր թիվքերուն, գինքը էլեր ա մեկ խեղճը:

Էկան, գացին թակավորի սարեն:

Թակավոր ասաց. – “Պապիկ, ետա տըղեն քիւ տըղե՞ն ա:

Պապիկն ասաց. – Խա՛, իմ տըղեն ա:

Ասաց. – Յիրիկվան սահաբ էրկըսվին էկեք մեր տուն, մե քիչ մըժելիք էնենք:

Ասաց՝ շատ լավ:

Յիրիկուն սահաբ էղավ էրկու, գացին թակավորի սենյակ:

Տըղեն ըսկսեց չալդի չալել: Խաղ ասաց ու խաղաց:

Թակավոր խելքից, մըտքից էլավ:

Թակավորի կնիկ ասեր էր թակավորին, օր էսօր հիրիկուն իմ սենյակի տիւռ տը պաց թռնիմ, իմ սենյակ տը գաս:

Թակավորի մըտքից էլեր էր: Եփ չալդին կըտրավ, թակավոր միտքն ինգավ կընկան խարձար:

Ասաց. – Վա՛, կնիկ առավոտուն ծի կը խայտառակա:

Չալդըջիք էլան, գացին ընոնց սենյակ:

Առավոտուն թակավորի կնիկ էկավ, թակավորին ասաց. – Զի կը խապես, տիւռ թռդի եպաց, չէկար: Առավոտուն քյե տը խայտառակեմ մեչ վոզիր-Վլոքիլին:

Թակավոր ասաց. – Կնիկ, չալդըջի մ'էկավ, եփ օր ըսկըսեց չալդի չալել, ծի խելքից, մըտքից էխան: Էնու խամար ես մոռցա, չէկա քիւ սենյակ:

Ասաց. – Կանի՛, ես էսօր տը կանչեմ, պիրեմ իմ մոտ էտա չալդըջին, թե էնպես չէղավ, քյե տը խայտառակեմ:

Յիրիկուն թակավորի կնիկ կանչեց չալդըջիք:

Վոզիր տըղին ասաց. – Տըղա՛, հերեկ թակավորի մոտն ենք, հեսօր էնոր կընկան մոտ: Ետօր էրկու կաք օյինբազութեն էնես:

Գացին թակավորի կընկան սենյակ:

Եփ հիրիկուն էղավ, տըղեն սկսեց չալդի չալել, ասել ու խաղալ:

Թակավորի կնիկ խելքից էլավ:

Եփ օր տըղեն էտա սանդիւխս կափաղ եպաց, էտա ոսկեղեն, արծաթեղեն Սև սար հերեվան էկավ: Ծաղկունքյ, սար, քար, ջեւիցաներ, հանսպիւր, թռո, պրաբներու կոներ նշանց էտու թակավորի կընկան:

Կնիկ օր տեսավ, խելքյ գյունաց:

Վերծ սանդիւս կոժեց:

Կնիկ վեր ուր հիշարցավ, ասաց. – Կա՞յ, եսա ի՞նչ պան էր, թակավոր կասեր, ես չըր ավտե:

Դենօր իրիկուն ախչիկ մոր ասեր էր, թե՛ ծի երկու խաւ ծըմբուկ պե:

Մեր չալղօջին օր տեսավ, ծըմբրուկ մըտեն էլավ:

Առավոտուն ախչիկ էկավ, մոր պան ասաց, ասաց. – Զի խապեցիր, ծըմբրուկ չըպերիր:

Մերն ասաց. – Դալ-քեֆիաթ եսպես ա, չալղօջիք օր տեսա, մըտախան էրի քիւ ծըմբրուկ:

Ախչիկ ասաց. – Դեսա իրիկուն կը կանչեմ, պերեմ իմ մոտ, եթե օր էնպես չեղավ՝ էլ իմ ծեռնեն չըս պըօծեր:

ճամփեց չալղօջոց իիտև:

Վոզիր ասաց. – Տըղա՛, էլ տասնապատիկ խընծ էն մեկէ տըրին հավել քիւ շընորիք շանց տաս, թե պա մ'եղի, հեսօր կեղի: էլան, գանցին ախչըկն սենյակ:

Դիրիկուն տըղեն ըսկսեց: Չալի կը զաներ, կասեր ու կը խաղեր:

Ախչիկ խելքյից, մըտքից էլավ:

Մեկ էլ տըղեն սանդիւսի կափաղ վերուց, օր Սև սարի թասպիր խանեց տիւս, էն ժամանակ ախչիկ վեր հիշարցավ, ասաց. – Կա՞յ, եսի ի՞նչ պան ա, եսի իմ էրազի սարն ա, իմ էրազի պատմութեն ա:

Ասաց. – Եսի մեկ եսն եմ, էնա մեկ՝ ոոց ջեյիըրան ա, գի մենք եսա հախափւր ճիւլ կը խըմենք, էնա կավու պըօռուկ կարծենք, գի արաքբներու կոներ, գի հախափի վըրավի թոռեր:

Ախչիկ ուր մտքի մեջ կասա. «Ես պիտի եսա պապիկ խանեմ տիւս, եսա տըղեն քըննեմ, իսի ի՞նչ խընթիր ա»:

Եփ տըղեն վերճացուց էնու օյինբազութեն, թակավորի ախչիկ ասաց. – Պապիկ, տիւն, խալայեղներ, տիւս էլեք, եսօր տըղեն ըստան տը մընա:

Վոզիրն ասաց. – Զէ՛, իմ տըղեն մընա ըստան, տիւն տը վընասես:

Ասաց. – Տըղին ընչի՞ տը վընասեմ: Տիւս էլեք:

Հըմեն էլ էլան տիւս:

Ախշիկ տղողին ասաց. – Տըղա՛, արե դրողին ասա, եսա ի՞նչ մաղահ ի, եսա ոսկեղեն, արծաթեղեն սար, եսա ջեյհըրաներ, արաբներու կոներ ընչի՞ եք շինե, եսի ի՞նչ ա:

Ասաց. – Թհի ինչո՞ւն պետք, ընչի՞ կը խառցընես: Ես չըխո ուխտեր եմ, օր եք հայվընի միս տղ չուտեմ, եթեղենի երես չըտեսնեմ ու չըփշակվեմ:

Ախշիկ ասաց. – Ընչի՞ խամար, ի՞նչ հապիկ:

Ասաց. – Քանի որ ես ես Աև սարի մաղի տեր չըմ կընդի:

Ախշիկ ասաց. – Զի պատմա՛, օր ես իմանամ խի ի՞նչ ա, կարելի ա, օր ես կընդեմ ետա մաղի դեր:

Տըղեն ասաց. – Ես կասեմ, տիւ լավ ականջ երա: Ես երազի մեջ ջեյհըրան եր, եք ջեյհըրա մ'էլ իմ կըշտի խետն եր, խընդրաց կերթենքյ, ենա կավու պըռուկ կարծենքյ, խընդրաց կը գյենքյ ենա հախպիւր, ճիւր կը խըմենքյ: Մենք ենալըմ զիրար կուգենքյ՝ մեր կըշտըներ ճըխթեր ենքյ հիրար, նա՛ իմ աչ կող պիւր կեր, նա՛ ենու ծախ: Օրըմ արաբներ բուեր պերած են, թալած են վեր հախպըրին: Ես հառած զացի ճիւր խըմելու, ընգան բոոզ վե, եք ընծի բոոերուց էխամ: Դիր ենի ընգան բոոզ վե, արաբներ են դեխեն էկան խընդ մե, ես քընուց հիշարցա, էլ չըգյիտցա՝ արաբներ ենոր պըռնեցին՝ չըմ գյիտն ըսպանեցին, չըմ գյիտե՛ ի՞նչըս երեցին, չըմ գյիտե՛:

Ախշիկ ասաց. – Տըղա՛, տիւ քյընուց հիշարցա՞ր, չէ՞ չըխո փախար:

Ասաց. – Չէ՛, ջանըմ, ես հիշարցա, ես չըփախա, իմ կյանք կը տեր ենու կյանքին ուղուր:

Ախշիկ ինքըն ինքյ մտածեց, ասաց. «Կերի, չեղի, եսա տղողեն ա են ոոց ջեյհըրան, օր խըն ծի կը ֆըոեր, թի չէ ի՞նչ գյիտեր, օր եսա թասպիր շինե»:

Ախշիկ ասաց. – Տըղա՛, ես ոոցեղենի միս տղ չուտեր ու մարրու հիրիս տղ չըպըշքեր: Եփ օր տիւ չըս բողե, փախե, են ժամանակ ես հոժար եմ, տղ փշակվիմ, իրկան տ'երթամ:

Ծեռ էպի լաճու վըզի պիլիր, լաճու երեսներ պայցեց:

Ախշիկ ասաց. – Տըղա՛, ես իմ նպատակին խասա, լե կեղի, օր իմ խեր ծի չըտա քյե, ընչի օր ես թակավորի մ'ախշիկ եմ, տիւ պըրանգանդի մարը մ'ես:

Տըղեն եսպես էնու վերվակ էխան, թակավոր նըշաներ, պաներ էրեվաց տակի խալըներ վերեն:

Ախչիկ ուրախութնե ծըռավ:

Ու ասաց. — Օրինյալ է Աստված, ես մեկել իմ մըրազին խասա: Օր իմ ուզած մարթն էր, ես երազի մեջ տեսա:

Մընաց, էջան, պառկան չում առավոտուն:

Առավոտուն լուր գյընաց խոր, օր ախչիկ դիրսվան իրիկ կէնա:

Խեր շատ ուրախացավ:

Խըլիսուն վոզիր էկավ, տըղեն առավ, գյընաց:

Թակավոր իր ախչըկեն կանչեց, տարավ:

Ասաց. — Ախչիկ, ես լըսեր եմ, օր տիւ իրիկ կէնես, ուրախութնե ծըռեր եմ, օղո՞րք ա, սո՞ւր ա:

Ախչիկ ասաց. — Խա՛, դադի՛, ես իրիկ կէնիմ:

Ասաց. — Ասա, խենք՝ ո՞ր մեկ վոզիրի լած տ'առնես, ասա՛, վաղ պերենքյ, նըշանենքյ, փըսակենքյ:

Ասաց. — Զէ՛, դադի՛, մենակ ես էն չալողջին կառեմ:

Խեր ասաց. — Ախչիկ, մենքյ թակավոր ենքյ, էնի չալոջի. մեր նամուսին չըկըպի էնոնց խետ պարեկմանաւ, յան վոզիրի, յան փաշի՛ն լաճն առ:

Ասաց. — Զեղի՛, դադի՛, չալողջին կառեմ:

Էն ժամանակ ախչիկ գյընաց:

Խերն ինքյն ուր ասաց. «Կայնի ճամիսեմ, էն չալողջիթ պերեմ՝ խի էնոնքյ ի՞նչ տեսակ միլաք են, խա՞յ են, քէ՞ւրը են, մըռտը՞ր են, ի՞նչ տեսակ միլաք են, իմ քանդրից նըլիմ տիւս, թէրքան, օր ախչիկ էլ չըտեսի ու ասի՛ ես էսա կառիմ»:

Թակավոր ճամիսեց, չալողջին ու պապիկ առեց, էկավ:

Ասաց. — Տո մա՞րք, տիւ ի՞նչ մարք եքյ: Մըռտը՞ր եքյ, խա՞յ եքյ, ի՞նչ եքյ:

Ասաց. — Թակավոր ապրած, ես թակավորի վոզիր եմ: Եսա տըղեն էլ թակավորի տըղա յա: Թե տիւ չըս ավտա՞ր, ահա իմ նըշաներ:

Ուր աբեն էպաց, վոզիրի նըշաներ շանց էտուր:

Տըղի սաքոն էլ օր խանեցին, թակավորական թագբանդներ և նըշաներ վերեն կարուկ են:

Թակավոր ուրախութնե խելքյից, մըտքից տիւս էլավ:

Ասաց. – Տըղեն էլ սիրուն, ախչիկն էլ սիրուն, թըխ առին զիրար ու վայելեն:

Թակավոր կանչեց էնոր ախչըկեն, առեց, եպիր:

Ասաց. – Ախչիկ, օր Աստված քյե էտուր, հեշ մեկ մարթիւն չըտըկեր ա, էն էլ սիրուն, տիւն էլ սիրուն, էն էլ թակավորի տըղա, տիւն էլ թակավորի ախչիկ, գացեօյ, մեկմըկու վայելեօյ:

Թակավոր էլավ, տաս խատ ծի, տաս խազար ոսկի, բարխանա էտի խընդ ախչըկեն ու տըղեն, զորքով ճամխեց տըղի խոր քաղաք:

Քաղցրին օր մոտխըսցան, ջկւյաբ տարան թակավորին, թի՝ վոզիր էկավ՝ քիւ լաճն էլ, խարսն էլ խետ:

Թակավոր ուրախութեն խելքյից, մըտքից էլավ:

Թակավոր եպի, լաճու խարսնիս էրաց: Յոթ օր, յոթ գյիշեր ուրախութեն էրին, էնոնք խասան էնոնց մըրազին, տիւքյ էլ՝ ծեր:

